ԿԱՐԾԻՔ

Շաքէ Զաւէնի Մենկեչյանի

«ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ 1970-ԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ»

թեմայով, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Շաքէ Մենկեչյանի ատենախոսությունը նվիրված է արդի հայկական սփյուռքի համեմատաբար քիչ ուսումնասիրված, սակայն գիտական և գործնական առումով կարևոր մի հատվածի՝ Արաբական Միացյալ Էմիրությունների հայկական համայնքի ձևավորման, զարգացման, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի ուսումնասիրությանը: Աշխատությունը, որն ընդգրկում է 1970-ական թվականներից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը, առանձնանում է իր թեմատիկ արդիականությամբ, աղբյուրագիտական ընդգրկունությամբ և ուսումնասիրության համալիր մոտեցմամբ:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է մի քանի կարևոր հանգամանքներով: Նախ՝ ԱՄԷ-ի հայկական համայնքը պատկանում է նոր ձևավորվող սփյուռքյան համայնքների շարքին, որոնց պատմությունն ու ինքնության կառուցման գործընթացները զգալիորեն տարբերվում են դասական սփյուռքահայ գաղութներից: Համաշխարհայնացման, անդրազգային միգրացիաների և ժամանակավոր բնակության աճող միտումների պայմաններում նման համայնքների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն հայ սփյուռքի արդի փոխակերպումների, այլև առհասարակ ինքնության, համայնքային կառույցների և համարկման գործընթացների հասկացման համար: Հեղինակը կարողացել է ԱՄԷ-ի հայկական համայնքը դիտարկել ոչ միայն որպես պատմական երևույթ, այլ նաև որպես շարունակաբար փոփոխվող սոցիալական և մշակութային միջավայր:

Աշխատության կարևոր արժանիքներից է այն, որ հեղինակը խնդրին մոտեցել է բազմաշերտ և միջգիտակարգային տեսանկյունից: Ատենախոսության մեջ համադրված են պատմագիտական, սփյուռքագիտական, ինքնության ուսումնասիրությունների վերլուծական մոտեցումները, ինչը հնարավորություն է տվել ոչ միայն նկարագրել փաստերը, այլև բացահայտել դրանց միջև առկա փոխկապակցվածությունները: Հատկանշական է, որ ուսումնասիրությունը սահմանափակված չէ միայն համայնքի պատմական անցյալի նկարագրությամբ և վերլուծությամբ, այլ ներառում է նաև արդի մարտահրավերների, ինքնության պահպանման մեխանիզմների, ներգաղթի և արտագաղթի գործընթացների քննությունը:

Ատենախոսության կառուցվածքը տրամաբանական է և ամբողջական: Այն բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ներածության մեջ հստակ ներկայացված են թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, ժամանակագրական և տարածական սահմանները, մեթոդաբանությունը, գիտական նորույթը և աղբյուրագիտական հիմքը: Հեղինակը հիմնավոր կերպով ներկայացնում է, որ ԱՄԷ-ի հայկական համայնքի ամբողջական պատմությունը մինչ այժմ չի դարձել առանձին համապարփակ գիտական ուսումնասիրության առարկա, և այս հանգամանքը աշխատանքի գիտական նորույթի կարևոր բաղադրիչներից է:

Առաջին գլխում քննության են առնվում ԱՄԷ-ի պետական կազմավորման գործընթացը, ազգային և կրոնական փոքրամասնությունների կարգավիճակը, ինչպես նաև հայերի վաղ ներկայությունը տարածաշրջանում: Հեղինակը կարողացել է բավական հետաքրքիր կերպով համադրել Պարսից ծոցի տարածաշրջանի քաղաքական պատմությունը հայկական առևտրական կապիտալի և միգրացիոն շարժերի հետ: Ուշագրավ է հատկապես Ջուլֆար/Ջուղա տեղանվան շուրջ ներկայացված քննարկումը, ինչպես նաև հայերի ներկայության վերաբերյալ տարբեր աղբյուրների համադրությունը: Գլխի կարևոր արժանիքներից է նաև այն, որ համայնքի ձևավորման պատմությունը ներկայացվում է ոչ թե մեկուսացված, այլ տարածաշրջանային զարգացումների համատեքստում:

Երկրորդ գլխում ներկայացվում է ԱՄԷ-ի հայկական համայնքի կառուցվածքը, կազմակերպական կյանքը և մշակութային գործունեությունը: Հեղինակը մանրամասն անդրադարձ է կատարել ազգային վարչությունների, եկեղեցու, կրթական և մշակութային հաստատությունների գործունեությանը՝ ցույց տալով, թե ինչպես են դրանք դարձել ինքնության պահպանման և համայնքային համախմբման առանցքային գործոններ: Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն դիտարկումը, որ ԱՄԷ-ի հայ համայնքը, ի տարբերություն բազմաթիվ այլ սփյուռքյան օջախների, ձևավորվել է համեմատաբար առանց խորը ներհամայնքային բաժանումների, ինչը հեղինակը պայմանավորում է գաղթի նոր ալիքների առանձնահատկություններով և ԱՄԷ-ի սոցիալ-տնտեսական միջավայրով:

Երրորդ գլխում հեղինակը ուսումնասիրում է ԱՄԷ-ի հայ համայնքի դերը ՀՀ–ԱՄԷ հարաբերություններում: Այս հատվածը հատկապես կարևոր է, քանի որ ցույց է տալիս, թե ինչպես կարող է սփյուռքյան համայնքը հանդես գալ որպես միջնորդ և կամուրջ պետությունների միջև: Հեղինակը փաստական հարուստ նյութի հիման վրա ներկայացնում է համայնքի մասնակցությունը ՀՀ դեսպանության կայացման գործընթացին, տնտեսական ու մշակութային կապերի զարգացմանը, ինչպես նաև Հայաստանի և Արցախի նկատմամբ ցուցաբերված աջակցությանը: Այս առումով աշխատանքը դուրս է գալիս զուտ համայնքագիտական ուսումնասիրության սահմաններից և ստանում միջազգային հարաբերությունների և սփյուռքի քաղաքական դերակատարության ուսումնասիրման նշանակություն:

Չորրորդ գլուխը նվիրված է ինքնության պահպանման, կրթության, լրատվամիջոցների և համայնքային ապագայի խնդիրներին: Այս հատվածում հատկապես նկատելի է հեղինակի փորձը՝ տեսական և կիրառական մակարդակներում հասկանալու նոր սփյուռքի առանձնահատկությունները: Արժեքավոր են ինքնության պահպանման մեխանիզմների, լեզվի, կրթության և եկեղեցու դերի վերաբերյալ դիտարկումները: Հեղինակը փաստում է, որ ԱՄԷ-ի համայնքը գտնվում է միաժամանակ և՛ համարկման, և՛ ինքնության պահպանման գործընթացների ազդեցության ներքո, և այս երկակիությունը ձևավորում է համայնքի արդի դիմագիծը:

Աշխատության կարևոր առավելություններից է աղբյուրագիտական հարուստ հենքը: Հեղինակը օգտագործել է արխիվային նյութեր, հուշամատյաններ, տարեգրություններ, համայնքային մամուլ, պաշտոնական փաստաթղթեր, հարցազրույցներ և գիտական գրականություն տարբեր լեզուներով: Հատկապես կարևոր է դաշտային նյութերի և բանավոր պատմությունների օգտագործումը, ինչը հնարավորություն է տվել վեր հանել համայնքային կյանքի այն շերտերը, որոնք սովորաբար բացակայում են պաշտոնական փաստաթղթերում: Արժանի է գնահատանքի նաև այն, որ հեղինակը փորձել է համադրել հայերեն, արաբերեն և անգլերեն աղբյուրները:

Բարձր գնահատելով ատենախոսի կողմից իրականացված մեծածավալ և աշխատատար հետազոտությունը՝ անհրաժեշտ ենք համարում նշել նաև մի շարք դիտարկումներ և նկատառումներ, որոնք կարող են օգտակար լինել թեմայի հետագա զարգացման և աշխատանքի տեսամեթոդաբանական առավել խորացման տեսանկյունից: Մասնավորապես՝

1. Ատենախոսության տեսական և մեթոդաբանական հատվածում հեղինակը հիմնականում հենվում է պատմական-նկարագրական և փաստագրական վերլուծության վրա: Թեև այս մոտեցումը լիովին արդարացված է թեմայի սկզբնաղբյուրային բնույթի և նորության պայմաններում, այնուամենայնիվ, աշխատանքը կարող էր տեսական առումով առավել շահել, եթե ավելի ընդգրկուն կերպով ներգրավվեին ժամանակակից սփյուռքագիտական և ինքնության ուսումնասիրությունների տեսությունները: Հատկապես օգտակար կլիներ անդրադարձը տրանսնացիոնալիզմի/անդրազգայնականության, «նոր սփյուռքների», շարժուն և բազմաշերտ ինքնությունների, հիբրիդային պատկանելությունների, ինչպես նաև գլոբալացված միջավայրերում համայնքային ինքնակազմակերպման վերաբերյալ արդի գիտական մոտեցումներին: Նման տեսական շրջանակների կիրառումը հնարավորություն կտար ԱՄԷ-ի հայկական համայնքի օրինակը դիտարկել ոչ միայն որպես առանձին պատմական դեպք, այլ նաև համաշխարհային միգրացիոն և սփյուռքյան գործընթացների համատեքստում:

2. Աշխատության առանձին բաժիններում զգացվում է փաստական նյութի և նկարագրական տվյալների գերակշռություն վերլուծական բաղադրիչի նկատմամբ: Հեղինակը հավաքագրել և շրջանառության մեջ է դրել մեծարժեք փաստական նյութ, համայնքային մամուլի տվյալներ, հարցազրույցներ, հիշատակարաններ և պաշտոնական փաստաթղթեր, ինչը, անկասկած, աշխատանքի կարևոր առավելություններից է: Սակայն որոշ հատվածներում ցանկալի կլիներ առավել ընդգծված համադրական և վերլուծական մոտեցում՝ հատկապես ԱՄԷ-ի հայկական համայնքը համեմատելով Ծոցի այլ երկրների հայկական համայնքների կամ արդի նոր ձևավորվող սփյուռքյան կենտրոնների հետ: Այդպիսի համեմատական քննությունը կարող էր ավելի տեսանելի դարձնել ԱՄԷ-ի համայնքի առանձնահատկությունները, ներքին կառուցվածքային տարբերությունները, ինքնության պահպանման մեխանիզմների յուրահատկությունները և համայնքային զարգացման մոդելները:
3. Հեղինակը բավական արդյունավետ կերպով օգտագործել է դաշտային նյութերը, բանավոր պատմությունները և հարցազրույցները, որոնք աշխատանքի կարևորագույն արժանիքներից են: Այդուհանդերձ, հետազոտության մեթոդաբանական հստակության տեսանկյունից օգտակար կլիներ առավել մանրամասն ներկայացնել դաշտային աշխատանքի կազմակերպման սկզբունքները, հարցվողների ընտրության չափանիշները, հարցազրույցների կառուցվածքն ու կիրառված որակական մեթոդները: Նման հավելյալ պարզաբանումները կուժեղացնեին աշխատանքի գիտական մեթոդաբանության հիմնավորվածությունը և առավել ամբողջական պատկերացում կտային հեղինակի կիրառած հետազոտական գործիքակազմի վերաբերյալ:
4. Որոշ հատվածներում նկատելի է, որ հեղինակն ավելի մեծ ուշադրություն է դարձրել համայնքային կառույցների, ազգային-եկեղեցական կյանքի և կազմակերպական գործընթացների նկարագրությանը, մինչդեռ սոցիալական շերտավորման, սերնդային տարբերությունների, կանանց դերակատարության, ինչպես նաև նոր միգրացիոն ալիքների ազդեցության վերաբերյալ

հարցադրումները համեմատաբար սահմանափակ են ներկայացված: Հատկապես հետաքրքրական կլիներ առավել լայն անդրադարձը Հայաստանից ԱՄԷ տեղափոխված նոր ներգաղթողների և ավանդական սփյուռքահայ միջավայրի փոխազդեցություններին, որոնք արդի սփյուռքագիտական ուսումնասիրություններում կարևոր տեղ են զբաղեցնում:

5. Ատենախոսության լեզուն ընդհանուր առմամբ գիտական է և կառուցվածքային առումով հստակ, սակայն առանձին ենթաբաժիններում երբեմն հանդիպում են ծավալուն նկարագրություններ, կրկնվող ձևակերպումներ և տեղեկատվական ծանրաբեռնվածություն, որոնք որոշ չափով թուլացնում են տեքստի վերլուծական դինամիկան: Այս հանգամանքը հատկապես նկատելի է այն հատվածներում, որտեղ փաստագրական նյութի մեծ ծավալը գերակշռում է գիտական ընդհանրացումների նկատմամբ:

Այդուհանդերձ, նշված դիտարկումները որևէ կերպ չեն նվազեցնում աշխատանքի ընդհանուր գիտական արժեքն ու կարևորությունը և առավելապես ունեն առաջարկային ու կառուցողական բնույթ: Շաքէ Մենկեչյանի ատենախոսությունը շարունակում է մնալ առանձնապես արդիական և գիտական լուրջ ներդրում ԱՄԷ-ի հայկական համայնքի, ընդհանրապես նոր սփյուռքների և արդի հայկական սփյուռքի պատմության ուսումնասիրության ոլորտում: Աշխատությունն առանձնանում է աղբյուրագիտական հարուստ հիմքով, փաստական նյութի ընդգրկունությամբ, թեմայի նորությամբ և հետազոտական բարեխղճությամբ, ինչն էլ հնարավորություն է տալիս այն գնահատել որպես հաջողված և գիտական պահանջներին համապատասխան ուսումնասիրություն: Շաքէ Մենկեչյանի ատենախոսությունը ամբողջական և գիտականորեն հիմնավորված ուսումնասիրություն է, որն ունի ինչպես պատմագիտական, այնպես էլ սփյուռքագիտական կարևոր նշանակություն:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Շաքէ Զաւէնի Մենկեչյանի «Արաբական Միացեալ Էմիրութիւններու հայ համայնքի հասարակական-քաղաքական կեանքը 1970-ական թուականներէն մինչեւ մեր օրերը» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման պահանջներին, իսկ

հեղինակը արժանի է Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՀ ԳԱԱ ՀԱԻ սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Լուսինե Ասատուրի Տանաջյան

Պաշտոնական ընդդիմախոս Լուսինե Ասատուրի Տանաջյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀԱԻ գիտական գծով փոխտնօրեն բ.գ.թ. Տորք Սամվելի Դալալյան